ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԱՅԳԵԿԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
АЙГЕКСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
Էլ. փոստ gyuxaygek@mail.ru
հեռ. 0231-6-57-60

«07» 10 2015թ.

N 138

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

*Հարգելի պարոն Ղահրամանյան*

Ի կատարումն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $77^1$-րդ հոդվածի առաջին մասի՝ Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի ղեկավարի կողմից սեպտեմբեր ամսվա ընթացքում արձակած կարգադրությունը և ընդունած որոշումը:

Առդիր՝ 2 թերթ:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկ գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
էլ.փոստ gyuxaygek@mail.ru
հեռ. 0231 6-57 60

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«04» սեպտեմբերի 2015 թվականի N 16-Ա

## ԳԱՅԱՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի առաջին մասով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասի «է» ենթակետով, հիմք ընդունելով Արմավիրի մարզպետարանից 2015 թվականի օգոստոսի 27-ին ստացված թիվ 01/04/3071-15 գրությունը՝ *կարգադրում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար (1.2-1) Գայանե Սարգսյանին 2015 թվականի սեպտեմբերի 7-ին գործուղել ք. Արմավիր՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան՝ մասնակցելու առաջիկայում ներդրվելիք շինարարության թույլտվությունների էլեկտրոնային միասնական համակարգի ուսուցման դասընթացներին:
2. Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետին (Մ. Թորոսյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ
ՓՈԽԱՐԻՆՈՂ Մ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2015 թվականի սեպտեմբերի 4
գ. Այգեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեկի գյուղական համայնք, Երևանյան խճուղի 24
Հեռ. 0231-6 57-50

# ՈՐՈՇՈՒՄ

«28» սեպտեմբերի 2015 թվականի N 16-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի երրորդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 15-ի N40-Ն որոշումը՝ *որոշում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի 2015 թվականի բյուջեի ֆինանսական ծախսերի կատարման նախահաշվում կատարել ժամանակացույցի փոփոխություն՝
   1) գյուղատնտեսություն՝ 04.02.01 բաժնի 4239 հոդվածի ամբողջ գումարը՝ 2850,0 հազար դրամը տեղափոխել 3-րդ եռամսյակ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2015 թվականի սեպտեմբերի 28

գ. Այգեկ